

# ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

## ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՏ ՄԱՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

### ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հանցագործությունների որակյալ քննության երաշխիքներից մեկը քրեական արդարադատության ռեսուրսների արդյունավետ օգտագործումն է, իրավապահ մարմինների ուժերի և միջոցների աննպատակ վատնումը բացառելը: Սակայն, ցավոք, մեր օրերում նկատվում է մի բացասական միտում. որոշ մարդիկ իրենց նեղ անձնական խնդիրները լուծելու համար սկսել են հաճախակի օգտագործել քրեական արդարադատության համակարգի հնարավորությունները: Հասարակության անբարեխիղճ անդամները հանցագործության մասին սուտ հաղորդումներ են հասցեագրում իրավապահ մարմիններին՝ այդ ճանապարհով ցանկանալով ճնշում գործադրել այլ անձանց վրա, վրեժ լուծել, ստանալ ապահովագրական հատուցում, ազատվել նրցակիցներից, քողարկել սեփական հակաիրավական կամ հակաբարոյական վարքագիծը, խուսափել վնասը հատուցելու պարտականությունից և այլն: Դրա հետևանքով իրավապահ մարմինները շեղվում են իրականում կատարված հանցագործությունների դեմ պայքարից՝ ժամանակ և միջոցներ ծախսելով սուտ հաղորդումների ստուգման ուղղությամբ: Դա իր հերթին հանգեցնում է քրեական գործերի անհիմն հարուցման, քաղաքացիների հարցաքննությունների, ժամանակատար ստուգումների, թանկարժեք փորձաքննությունների իրականացման: Հանցագործության մասին սուտ հաղորդումների հիման վրա առանձին դեպքերում կարող են ձերբակալվել, մեղադրվել և դատապարտվել անմեղ անձինք:

Վերոշարադրյալը վկայում է սուտ մատնության հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին: Նման արարքները ոտնձգություն են իրավապահ մարմինների նորմալ գործունեության, մարդկանց իրավունքների և օրինական շահերի դեմ, ինչով էլ պայմանավորվել է սուտ մատնության քրեականացումը:

Սուտ մատնության համար քրեական պատասխանատվությունը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) 333 հոդվածով: Սակայն, ինչպես ցույց է տալիս դատաքննչական պրակտիկայի ուսումնասիրությունը, սուտ մատնության հանցակազմի առանձին հատկանիշների մեկնաբանման հարցում առկա են հակասական մոտեցումներ, ինչն իր հերթին հանգեցնում է որակման սխալների: Մի կողմից դա պայմանավորված է սուտ մատնության համար քրեական պատասխանատվություն սահմանող նորմի անկատարությամբ, իսկ մյուս կողմից՝ սուտ մատնության որակմանն առնչվող հարցերի տեսական ոչ բավարար մշակվածությամբ:

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվում ներկայացնելու սուտ մատնության օրենսդրական կարգավորման և որակման առանձին հարցերի վերաբերյալ սեփական դիրքորոշումները:

Քր. օր.-ի 333 հոդվածի առաջին մասի դիսպոզիցիան ձևակերպված է հետևյալ կերպ. «Հանցագործության մասին սուտ մատնությունը, եթե անձը գործել է՝ գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է»:

Ինչպես երևում է դիսպոզիցիայի ձևակերպումից, սուտ մատնության առարկան հանցագործության մասին կեղծ տեղեկատվությունն է: Ընդ որում, սուտ մատնությունը կարող է ունենալ երեք դրսևորում՝

1. անձը հայտնում է իրականում գոյություն չունեցող հանցագործության մասին՝ առանց մատնանշելու կոնկրետ անձին,

2. անձը հայտնում է իրականում գոյություն չունեցող հանցագործության մասին՝ մատնանշելով կոնկրետ անձին,

3. անձը հայտնում է իրականում նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործության մասին՝ դրա մեջ մեղադրելով ակնհայտ անմեղ անձին:

Կարծում ենք, որ «սուտ մատնություն» անվանումն ամբողջությամբ չի արտացոլում վերոնշյալ երեք դրսևորումները, քանի որ մատնելը ենթադրում է կոնկրետ անձի մատնանշում: Այսպես, ըստ «Արդի հայերենի բացատրական բառարանի», մատնել նշանակում է «1. Որևէ մեկի հանցավոր կամ որևէ տեսակետից դատապարտելի արարքի, արտահայտության և այլնի մասին հայտնել իշխանություններին կամ այն անձանց, որոնց վերաբերում է արտահայտությունը, արարքը և այլն: 2. Դավաճանությամբ **մեկին** նրա թշնամու ձեռքը տալ, հանձնել»<sup>1</sup> (ընդգծումը մերն է – Մ. Մ.): Ուստի, մեր կարծիքով, քննարկվող հանցագործությունն ավելի ճիշտ կլինի անվանել «հանցագործության մասին սուտ հաղորդումը»: Բացի այդ, կարծում ենք, որ հանցագործության մասին սուտ հաղորդումը, որը զուգորդվում է կոնկրետ անձին մատնանշելով, անհրաժեշտ է նախատեսել հոդվածի առանձին մասով՝ սահմանելով ավելի խիստ պատասխանատվություն: Նման արարքը ոտնձգում է ոչ միայն իրավապահ մարմինների նորմալ գործունեության, այլև անմեղ անձի իրավունքների և օրինական շահերի դեմ:

Կարծում ենք, որ հանցագործության մասին սուտ հաղորդման համար քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի նաև այն անձը, ով, մեղայականով ներկայանալով, ինքն իրեն վերագրում է իրականում չկատարված կամ այլ անձի կողմից կատարված հանցագործություն: Դա կարող է կատարվել ավելի ծանր հանցանքը քողարկելու, մերձավորի կատարած հանցանքը իր վրա վերցնելու և այլ շարժառիթներով: Թեև նման արարքով անձը վնաս է պատճառում սեփական շահերին, սակայն դրանով խախտվում է նաև սուտ մատնության հիմնական անմիջական օբյեկտը. իրավապահ մարմինների գործունեությունը իրականացվում է սխալ ուղղությամբ:

Սուտ մատնության առարկա կարող է հանդիսանալ ինչպես կատարված, այնպես էլ նախապատրաստվող կամ կատարվող հանցագործության

<sup>1</sup> Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Եր., 1976, էջ 975:

մասին կեղծ տեղեկատվությունը: Իսկ անմեղ անձը կարող է մատնանշվել և՛ որպես կատարող, և՛ որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող:

Հաղորդվող տեղեկատվության սուտ լինելը պետք է վերաբերի գործի փաստական հանգամանքներին և ոչ թե արարքի իրավական գնահատմանը: Արարքին ոչ ճիշտ իրավական գնահատական տալը սուտ մատնության հանցակազմ չի առաջացնում: Օրինակ՝ եթե անձը հայտնում է խուլիզանության մասին, սակայն իրականում կատարվել է ինքնիրավչություն<sup>2</sup>: Ընդ որում, հանցակազմի առկայության համար պարտադիր չէ, որ անձը նշի հանցագործության ճիշտ անվանումը. բավական է, որ նա ներկայացնի գործի այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք համապատասխանում են քր. օր.-ով նախատեսված որևէ հանցագործության հատկանիշներին: Օրինակ՝ անձը չի նշում, որ իր նկատմամբ կատարվել է ավազակություն, այլ հաղորդում է, որ հրազենի գործադրմամբ, սպանության սպառնալիքով իրենից խլել են դրամապանակը:

Հանցագործության մասին սուտ հաղորդման առարկա կարող է լինել միայն այնպիսի կեղծ տեղեկատվությունը, որը ներկայացվում է որպես հավաստի: Եթե անձը իրավապահ մարմիններին է հաղորդում իր ենթադրություններն ու կասկածները հանցանքը որևէ անձի կողմից կատարված լինելու վերաբերյալ, ապա սուտ մատնության հանցակազմը բացակայում է:

Քննարկման է արժանի նաև այն հարցը, թե արդյոք սուտ մատնության հանցակազմն առկա է այն դեպքերում, երբ անձը հաղորդում է իրականում կատարված հանցագործության մասին, սակայն չափազանցացնում է դրա կատարման փաստական հանգամանքները, ինչն ազդում է արարքի որակման վրա: Օրինակ՝ եթե անձի նկատմամբ կատարվել է կողոպուտ, սակայն նա սուտ հաղորդում է տալիս այն մասին, որ գույքը հափշտակելու նպատակով իր նկատմամբ գործադրվել է կյանքի համար վտանգավոր բռնություն, այսինքն՝ կատարվել է ավազակություն: Կամ՝ եթե կատարվել է զգալի չափերով հափշտակություն, սակայն անձը հաղորդում է խոշոր չափերով կատարված հափշտակության մասին: Կարծում ենք, որ նման դեպքերում ևս սուտ մատնության հանցակազմն առկա է, քանի որ հանցագործության օբյեկտը վնասվում է. արարքի ճիշտ որակումը քրեական գործ հարուցող մարմնի նորմալ գործունեության բաղադրիչներից մեկն է, կարելի է ասել՝ դրա նախապայմանը: Առավել ևս այն դեպքերում, երբ սուտ մատնությունը զուգորդվում է անձին մատնանշելով, գործի փաստական հանգամանքները չափազանցացնելը կարող է հանգեցնել այդ անձին անհիմն ավելի խիստ պատասխանատվության ենթարկվելուն: Փաստորեն, սուտ մատնության առարկա կարող է լինել ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասամբ կեղծ տեղեկատվությունը:

Սուտ մատնության հանցակազմի կապակցությամբ պարզաբանման կարիք ունեցող հաջորդ հարցը հանցագործության մասին սուտ հաղորդման հասցեատերերի շրջանակն է, որոնց վերաբերյալ քր.օր.-ի 333 հոդվածում նշում չկա:

---

<sup>2</sup> Ст'я Новиков В. А. Некоторые вопросы уголовной ответственности за заведомо ложный донос в совершении преступления (ст. 306 УК РФ) // «Уголовное право», 2003, № 1, էջ 46:

Գրականության մեջ արտահայտվել է այն կարծիքը, որ հանցագործության մասին սուտ հաղորդումը պետք է հասցեագրված լինի միայն քրեական գործ հարուցելու լիազորությամբ օժտված մարմիններին և պաշտոնատար անձանց: Այս տեսակետի կողմնակիցները դա հիմնավորում են այն բանով, որ քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ քրեական գործ հարուցող մարմինները պարտավոր են հանցագործության մասին հաղորդում տված անձին նախազուլաացնել սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին<sup>3</sup>: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ քր. դատ. օր.) 177 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Եթե լրացել է դիմողի 16 տարին, նա նախազուլաացվում է սուտ մատնության համար պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ»:

Մեր կարծիքով, անձի արարքում սուտ մատնության հանցակազմի առկայությունը չպետք է կապվի այն հանգամանքի հետ, թե արդյոք նա նախազուլաացվել է սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, թե ոչ: Նախ, օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից: Եվ բացի այդ, անձին քրեական պատասխանատվության մասին նախազուլաացնելու ընթացակարգը պարզապես կապված է քրեական դատավարության ոլորտում մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, քանի որ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է անձին պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները: Այսպես, սուտ մատնությունը կարող է կատարվել նաև մինչև քրեական գործի հարուցումը իրականացվող ստուգողական գործողությունների շրջանակում բացատրություն տալու ընթացքում, իսկ քր. դատ. օր.-ը բացատրություն տվողին սուտ մատնության համար քրեական պատասխանատվության մասին նախազուլաացնելու ընթացակարգ չի սահմանում: Սակայն կարծում ենք, որ սուտ մատնության հանրային վտանգավորությունը չի նվազում, և դրա բնույթը չի փոխվում, երբ հանցագործության մասին սուտ մատնությունը կատարվում է ոչ թե հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդման ձևով, այլ մինչև քրեական գործի հարուցումը բացատրություն տալու ձևով:

Հանցագործության մասին սուտ հաղորդման հասցեատեր կարող են լինել ոչ միայն քրեական գործ հարուցելու լիազորությամբ օժտված մարմինները, այլև այն մարմինները, որոնք, չիրականացնելով քրեական հետապնդման գործառույթ, պարտավոր են հանցագործության մասին իրենց հայտնի դարձած տեղեկությունները սահմանված կարգով փոխանցելու քրեական գործ հարուցելու լիազորությամբ օժտված մարմիններին:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թվականի ՀՀ օրենքի 33 հոդվածի առաջին մասի համաձայն՝ եթե դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական մարմին, ապա դիմումը ստացած վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին: Նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ եթե դիմումում ներկայացված

<sup>3</sup> См. Кульберг Я. М. Преступления против правосудия. М., 1962, т. 37:

հարցերից մեկը կամ մի քանիսը ենթակա են վարչական այլ մարմնի իրավասությանը, ապա վարչական մարմինը դիմումն այդ մասով վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին: Հետևաբար, սուտ մատնության հանցակազմն առկա է նաև այն դեպքերում, երբ հանցագործության մասին սուտ հաղորդումը հասցեագրվում է «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածում նշված վարչական մարմիններին: Դրանք Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններն են (Հայաստանի Հանրապետության նախարարություններ և հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ, մարզպետներ, Երևանի քաղաքապետ, համայնքի ավագանի և համայնքի ղեկավար): Եթե վերը թվարկված մարմիններից բացի, վարչարարություն են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա ըստ «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ:

Հանցագործության մասին սուտ հաղորդման հասցեատեր կարող է լինել նաև դատարանը: Թեև դատարանը քրեական գործ հարուցելու լիազորությամբ օժտված չէ, սակայն քր. դատ. օր.-ի 41 հոդվածի երկրորդ մասի չորրորդ կետով ամրագրված է դատարանի լիազորությունը՝ օրենքով նախատեսված դեպքերում քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին:

Այսպիսով, հանցագործության մասին սուտ հաղորդման հասցեատեր կարող են լինել քրեական գործ հարուցելու լիազորությամբ օժտված մարմինները, վարչական մարմինները և դատարանը:

Օբյեկտիվ կողմից սուտ մատնությունը դրսևորվում է քրեական գործ հարուցելու լիազորությամբ օժտված մարմնին, դատարանին կամ վարչական մարմնին հանցագործության մասին սուտ հաղորդում տալով: Ընդ որում, «հաղորդում» բառը չպետք է մեկնաբանվի միայն զուտ դատավարական իմաստով: Հանցագործության և (կամ) հանցագործի մասին կեղծ տեղեկատվությունը կարող է հաղորդվել բանավոր կամ գրավոր ձևով՝ որպես հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդում, բացատրություն, դիմում, բողոք և այլն:

Գրականության մեջ միասնական մոտեցում չկա այն հարցի կապակցությամբ, թե արդյոք սուտ մատնության հանցակազմն առկա է, երբ հանցագործության մասին սուտ հաղորդումն անանուն է: Որոշ հեղինակներ կարծում են, որ անանուն հաղորդումը ևս ձևավորում է սուտ մատնության հանցակազմ<sup>4</sup>: Այդ տեսակետի հակառակորդները գտնում են, որ անանուն հաղորդման դեպքում սուտ մատնության հանցակազմը բացակայում է<sup>5</sup>: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177 հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Չստորագրված կամ կեղծ ստորագրությամբ կամ մտացածին

<sup>4</sup> Տե՛ս **Чучаев А. И.** Преступления против правосудия: Научно-практический комментарий. Ульяновск, 1997, էջ 47:

<sup>5</sup> Տե՛ս **Хабидулин М. Х.** Ответственность за заведомо ложный донос и заведомо ложное показание по советскому уголовному праву. Казань, 1975, էջ 18, «Преступления против правосудия». М., 2005, էջ 215:

անձի անունից գրված նամակը, հայտարարությունը կամ հանցագործության մասին այլ անանուն հաղորդումը քրեական գործ հարուցելու առիթ չէ»:

Սակայն կարծում ենք, որ քրեաիրավական հարաբերությունները չպետք է խառնել քրեադատավարական հարաբերությունների հետ: Անձի արարքում սուտ մատնության հանցակազմի առկայությունը չպետք է կապվի հանցագործության մասին հաղորդման ձևի հետ: Անձի հայտնի չլինելը կարող է հանգեցնել այն բանին, որ չի առաջանա քրեադատավարական հարաբերություն, և նա չի ենթարկվի քրեական պատասխանատվության: Սակայն դա չի նշանակում, որ բացակայում է նաև քրեաիրավական հարաբերությունը: Ուստի, սուտ մատնության հանցակազմն առկա է նաև այն դեպքերում, երբ հանցագործության մասին սուտ հաղորդումը արվել է անանուն զանգի կամ նամակի ձևով: Խնդիրն այն է, որ անանուն զանգերն ու նամակները թեև քրեական գործ հարուցելու առիթ չեն, սակայն դրանց ստուգմանն ուղղված գործողությունների կատարման հիմք են, որի պարագայում նույնպես սուտ մատնության հիմնական անմիջական օբյեկտին վնաս է պատճառվում:

Սուտ մատնության հանցակազմը ձևական է: Հանցանքն ավարտված է համարվում այն պահին, երբ քրեական գործ հարուցելու լիազորությամբ օժտված մարմինը կամ դատարանը կամ վարչական մարմինը ստանում է հանցագործության մասին սուտ հաղորդումը:

Սուտ մատնությունը սուբյեկտիվ կողմից կարող է դրսևորվել միայն ուղղակի դիտավորությամբ: Անձը գիտակցում է իր արարքի հանրորեն վտանգավոր բնույթը, հասկանում է հաղորդման մեջ բովանդակվող տեղեկությունների կեղծ լինելը (գիտակցական հատկանիշ) և ցանկանում է դրանք հաղորդել քրեական գործ հարուցելու լիազորությամբ օժտված մարմնին կամ դատարանին կամ վարչական մարմնին (կամային հատկանիշ):

ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածում նշում չկա հանցագործության նպատակի մասին: Այս առումով գրականության մեջ արտահայտվել են իրարամերժ կարծիքներ: Որոշ հեղինակներ կարծում են, որ նպատակի առկայությունը տրամաբանորեն բխում է սուտ մատնության հանցակազմի ձևակերպումից, որպես այդպիսին հանդիսանում է անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը<sup>6</sup>: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ սուտ մատնության նպատակը պետք է լինի քրեական գործի հարուցումը և անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը<sup>7</sup>: Կարծում ենք, որ սուտ մատնության հանցակազմի շրջանակների այսպիսի սահմանափակումը հիմնավորված չէ: Սուտ մատնության համար պարտադիր չէ, որ հանցավորը մատնանշի կոնկրետ անձի, ուստի անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակը կարող է և բացակայել: Հանցավորի անմիջական նպատակը կարող է լինել ոչ թե քրեական գործ հարուցելու իրավունք ունեցող մարմնին ապակողմնորոշելը և

<sup>6</sup> Տե՛ս «Комментарий к Уголовному кодексу Российской Федерации». М., 2004, էջ 539:

<sup>7</sup> Տե՛ս **Хабидулин М. Х.**, նշվ. աշխ., էջ 59:

քննությունը սխալ ուղղությամբ տանելը, այլ ուրիշ անձի կատարած հանցանքը քողարկելը, ապահովագրական վճարը ստանալը, գույքի բացակայությունը իբր կատարված հափշտակությամբ հիմնավորելը, իրավունքների ձեռք բերելը, պարտականություններից ազատվելը և այլն: Կարևորն այն է, որ անձը գիտակցի, որ իր արարքով մոլորության մեջ է գցում քրեական գործ հարուցելու իրավունք ունեցող մարմիններին:

Շարժառիթը նույնպես սուտ մատնության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ չէ: Առավել հաճախ սուտ մատնությունը կատարվում է նախանձի, վրեժի, թշնամանքի, շահադիտական, կարիերիստական, անախորժություններից խուսափելու, արդեն կատարված հանցանքի բացահայտման վախի և այլ շարժառիթներով<sup>8</sup>:

Սուտ մատնության սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած, ֆիզիկական մեղսունակ անձը:

Քննարկման է արժանի սուտ մատնության և սուտ ցուցմունք տալու հանցակազմերի սահմանազատման հարցը: Եթե հանցագործության մասին սուտ հաղորդումը արվում է մինչև քրեական գործի հարուցումը (որպես հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդում նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություն տալու ժամանակ և այլն), ապա առկա է սուտ մատնության հանցակազմը:

Եթե հարուցված քրեական գործով կատարվող հարցաքննության ժամանակ վկան կամ տուժողը իր ցուցմունքում կատարում է սուտ մատնություն, ապա ըստ ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության կանոնների, արարքը պետք է որակել որպես սուտ ցուցմունք տալ: Սակայն որոշակի առանձնահատկություն ունի այն դեպքը, երբ անձը սուտ մատնություն կատարելուց հետո՝ հարուցված քրեական գործով որպես վկա կամ տուժող հարցաքննվելիս, սուտ ցուցմունքներով հաստատում է իր հաղորդման մեջ նշված փաստերը: Որոշ հեղինակներ առաջարկում են արարքը որակել միայն սուտ մատնություն<sup>9</sup>, իսկ մյուսները՝ հանցագործությունների համակցությամբ՝ սուտ մատնություն և սուտ ցուցմունք տալ<sup>10</sup>: Կարծում ենք, որ քննարկվող իրավիճակում համակցությունը բացակայում է, քանի որ վկան և տուժողը նույն գործով սուտ ցուցմունք տալով ընդամենը հաստատում են իրենց իսկ հաղորդման մեջ նշված փաստերը, հետևաբար նոր ինքնուրույն հանցանք չեն կատարում: Տվյալ դեպքում սուտ ցուցմունք տալը հանդիսանում է սուտ մատնության տրամաբանական շարունակություն:

Ինչ վերաբերում է կասկածյալի և մեղադրյալի կողմից հարցաքննության ժամանակ սուտ մատնություն կատարելուն, ապա, կարծում ենք, արարքի որակման հարցը պետք է լուծվի հետևյալ կերպ: Եթե սուտ մատնություն կատարելով նրանք մատնանշում են նաև կոնկրետ անձին, ապա արարքը պետք է որակվի որպես սուտ մատնություն, քանի որ քր. դատ.

<sup>8</sup> Տե՛ս **Чучаев А. И.**, նշվ. աշխ., էջ 48:

<sup>9</sup> Տե՛ս **Хабидуллин М. Х.**, նշվ. աշխ., էջ 90-92, **Лобанова Л. В.** Преступления против правосудия: теоретические проблемы классификации и законодательной регламентации. Волгоград, 1999, էջ 167; **Иногамова-Хегай Л. В.** Преступления против правосудия // Российское уголовное право. Т. 2. Особенная часть: Учебник. М., 2006, էջ 560:

<sup>10</sup> Տե՛ս «Уголовный кодекс Российской Федерации. Постатейный комментарий». М., 1996, էջ 650:

օր.-ի 63 հոդվածի 4-րդ մասի և 35 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կասկածյալի և մեղադրյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար, բացի այն դեպքերից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին: Իսկ եթե կասկածյալը և մեղադրյալը որպես պաշտպանության միջոց պարզապես հայտարարում են գոյություն չունեցող հանցագործության մասին, ապա ենթակա չեն պատասխանատվության ո՛չ սուտ ցուցմունքի, ո՛չ էլ սուտ մատնության համար, քանի որ դա պաշտպանության իրավունքի իրականացման ձև է:

Պետք է նշել, որ Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիան իր № 1-Վ97-16 գործով որոշման մեջ նշել է, որ կասկածյալի սուտ ցուցմունքները այլ անձի կողմից հանցանքի կատարման վերաբերյալ սուտ մատնության հանցակազմ չեն ձևավորում, քանի որ դրանք տրվել են քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակով և հանդիսացել են մեղադրանքից պաշտպանվելու միջոց<sup>11</sup>: Համամիտ չլինելով նման դիրքորոշման հետ՝ կարծում ենք, որ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի կարող բացարձակ և անսահմանափակ լինել: Այսպես, ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված միջոցներով պաշտպանելու իրավունք»: Այն, որ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը անսահմանափակ չէ, հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշմամբ: Մասնավորապես, «Բրանդշտետտերն ընդդեմ Ավստրիայի» գործով որոշման մեջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ կետը չի նախատեսում մեղադրանքից պաշտպանվելու համար ցանկացած փաստարկ օգտագործելու անսահմանափակ իրավունք<sup>12</sup>:

Այս կապակցությամբ հարց է ծագում՝ արդյոք սուտ մատնության հանցակազմն առկա՞ է այն դեպքում, երբ կասկածյալը կամ մեղադրյալը, իր ցուցմունքներով կեղծ տեղեկություններ հայտնելով, մեղքի իր բաժինը բարդում է հանցակիցների վրա: Օրինակ՝ եթե մի խումբ անձանց կողմից կատարված ավազակության վերաբերյալ քրեական գործով մեղադրյալը հայտնում է, որ կազմակերպիչը եղել է ոչ թե ինքը, այլ մյուս մեղադրյալը, կամ եթե խմբակային սպանության գործով մեղադրյալը հայտնում է, որ ինքը միայն բռնել է տուժողին, իսկ մահացու հարվածը հասցրել է մյուս մեղադրյալը: Կարծում ենք, որ նման դեպքերում կասկածյալի, մեղադրյալի կողմից տրվող սուտ ցուցմունքները մեղադրանքից պաշտպանվելու թույլատրելի միջոց են և չեն կարող որակվել որպես սուտ մատնություն, քանի որ հանցակիցը հանցագործությանն ակնհայտորեն

<sup>11</sup> Տե՛ս «Судебная практика к Уголовному кодексу Российской Федерации». М., 2011, էջ 1184:

<sup>12</sup> Տե՛ս European Court of Human Rights, Case of Brandstetter v. Austria, judgment of 28 August 1991, Series A, № 211:



առնչություն չունեցող անձ չէ:

Քր. օր.-ի 333 հոդվածի 2-րդ մասով ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսված սուտ մատնության համար, որը՝

1) զուգորդվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով,

2) զուգորդվել է մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելով,

3) կատարվել է շահադիտական դրդումներով:

Ինչպես երևում է առաջին ծանրացնող հանգամանքի օրենսդրական ձևակերպումից, արարքը կարող է որակվել քր. օր.-ի 333 հոդվածի երկրորդ մասի առաջին կետով միայն այն դեպքում, երբ հանցավորը, սուտ մատնություն կատարելով, մատնանշում է կոնկրետ անձի: Եթե անձը պարզապես կեղծ տեղեկատվություն է հայտնում իրականում գոյություն չունեցող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին, սակայն դրա մեջ չի մեղադրում կոնկրետ անձի, ապա ծանրացուցիչ հանգամանքը բացակայում է:

Երկրորդ ծանրացնող հանգամանքի կապակցությամբ հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչպես պետք է որակել արարքը, եթե մեղադրանքի արհեստական ապացույցների ստեղծումը կատարվում է այսպես կոչված «կեղծ» վկաների միջոցով: Կարծում ենք, որ «կեղծ» վկաների «պատրաստումը» դուրս է սուտ մատնության հանցակազմի շրջակներից, և ելնելով հանցանքի կատարման եղանակից՝ արարքը, բացի քր. օր.-ի 333 հոդվածի երկրորդ մասի երկրորդ կետից, պետք է լրացուցիչ որակվի կամ որպես սուտ ցուցմունք տալու դրդչություն (քր. օր.-ի 38-338 հոդվածներ), կամ որպես սուտ ցուցմունք տալու համար կաշառել կամ հարկադրել (քր. օր.-ի 340 հոդված):

Ինչ վերաբերում է երրորդ ծանրացնող հանգամանքին, ապա շահադիտական դրդումներով սուտ մատնությունն առկա է այն դեպքերում, երբ անձը սուտ մատնության կատարմամբ ձգտում է ստանալ նյութական շահ կամ ազատվել նյութական պարտավորություններից:

Հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդման կապակցությամբ կատարված ստուգողական գործողությունների միջոցով շատ հաճախ չի հաջողվում քրեական գործի հարուցման բավարար հիմքեր հայտնաբերել, և քրեական գործի հարուցումը մերժվում է: Նման դեպքերում պետք է լուծվի հանցագործության մասին հաղորդում տված ֆիզիկական անձին սուտ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Կարծում ենք, որ քրեական գործի հարուցման համար բավարար հիմքեր չհայտնաբերելը դեռևս չի վկայում այն մասին, որ տվյալ հանցագործությունն իրականում չի կատարվել, կամ կատարողն այն անձը չէ, ում մատնանշել է հաղորդում տվողը: Ընդ որում, հանցագործության մասին հաղորդում տված ֆիզիկական անձին սուտ մատնության համար տվյալ դեպքում քրեական պատասխանատվության չենթարկելը որևէ կերպ կասկածի տակ չի դնում այն անձի անմեղությունը, որի վերաբերյալ արվել էր հաղորդումը: Ուստի քրեական գործի հարուցումը մերժելը ինքնին դեռևս

բավարար հիմք չէ, որ հանցագործության մասին հաղորդում տված ֆիզիկական անձը քրեական պատասխանատվության ենթարկվի սուտ մատնության համար: Սուտ մատնության հանցակազմի հաստատման համար անհրաժեշտ է ոչ թե հանցագործության մասին հաղորդումը չհաստատելը, այլ դրա հերքումը կոնկրետ փաստական տվյալների կամ ապացույցների բավարար համակցությամբ:

Ելնելով վերը ասվածից, առաջարկում ենք քր. օր.-ի 333 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 333. Հանցագործության մասին սուտ հաղորդումը

1. Քրեական գործ հարուցելու լիազորությամբ օժտված մարմնին, դատարանին կամ վարչական մարմնին հանցագործության մասին սուտ հաղորդում տալը, եթե անձը գործել է՝ գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը զուգորդվել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձին մեղադրելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որը զուգորդվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին, երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) զուգորդվել է մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելով,

2) կատարվել է շահադիտական դրդումներով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Կարծում ենք, որ օրենսդրական այս փոփոխությունները կնպաստեն հանցագործությունների ճիշտ որակմանը և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

#### **МИСАК МАРКОСЯН – Уголовная ответственность за ложный донос.**

– Статья посвящена ряду вопросов законодательной регламентации и квалификации заведомо ложного доноса. Практика показывает, что существуют противоречивые подходы к интерпретации некоторых признаков его состава, что в свою очередь приводит к ошибкам в квалификации. С одной стороны, это обусловлено несовершенством нормы, устанавливающей уголовную ответственность за заведомо ложный донос, а с другой стороны, отсутствием достаточной теоретической разработки вопросов квалификации этого преступления.

В статье рассматриваются такие вопросы, как предмет заведомо ложного до-

носа, круг адресатов ложного сообщения о преступлении, субъективная сторона данного преступления, критерии разграничения составов заведомо ложного доноса и дачи ложных показаний, отягчающих заведомо ложный донос. В заключение даётся предложение по усовершенствованию нормы, устанавливающей уголовную ответственность за заведомо ложный донос.

**MISAK MARKOSYAN – *Criminal Liability for False Denunciation.*** – Some issues on the legislative regulation and qualification of false denunciation are discussed in the present article. According to the analysis of the legal practice, there are contradictory approaches to the interpretation of certain characteristics of corpus delicti for false denunciation, which, in its turn, results in the qualification mistakes. On the one hand, this is a result of the imperfectness of the legislative norm prescribing criminal liability for false denunciation, and on the other hand – by the insufficient theoretical interpretation of issues related to the qualification of the discussed crime.

The author's approaches to the interpretation of the subject matter, subjective side of false denunciation, the framework of addressees for fake information about the crime, the criteria for differentiating between false denunciation and fake testimony, as well as aggravating types of false denunciation are discussed in the present article.

In the conclusion of the article the author proposes a legislative amendment aimed at the improvement of the norm setting criminal liability for false denunciation.